ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«01» Նոյեմբերի 2024թ. ՆՄՈ/514-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N1 հավելվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետով, N2 հավելվածի 3-րդ և 18-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի ՆՄՈ/794-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 5.1.1-ին կետի պահանջները.

որոշում եմ՝

1. 2024 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում (այսուհետ՝ մարզ) անցկացնել «Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈՒ):

2. ՇՈՒ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) ՇՈՒ-ի ղեկավարի տեղակալ՝ մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Խաչատուր Մկրտչյանին՝

2) ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ) Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Հովհաննես Մարգարյանին:

3. Հաստատել՝

1) ՇՈՒ-ի ղեկավարման խմբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի՝

2) ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) ՇՈՒ-ի միջնորդական խմբի կազմը՝ համաձայն հավելված N 3-ի:

4. ՇՈՒ-ին ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին՝

2) մարզի տարահանման հանձնաժողովին.

3) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

4) ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությանը.

5) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Արմավիրի մասնաճյուղին՝

6) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության Արմավիրի մարզի թիմին.

7) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Մուսալեռ» մասնաճյուղի Արմավիրի էլ. ցանցին.

8) «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի շահագործման տեղամասին.

9) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի գազաֆիկացման և գազաբաշխման միավորմանը.

10) մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ, Ջրառատ, Խոյ համայնքի Ծաղկունք, Ծաղկալանջ, Դողս բնակավայրերը:

5. ՇՈՒ-ի ղեկավարի տեղակալին՝ ՇՈՒ-ի նախապատրաստման և անցկացման համար ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

6. ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետին՝

1) մինչև 2024 թվականի նոյեմբերի 5-ը կազմել և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի փաթեթը՝

2) կազմակերպել ՇՈՒ-ի մասնակիցների նախապատրաստումը ուսումնավարժության անցկացմանը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ՇՈՒ-ի մասնակիցներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն՝

4) 2024 թվականի նոյեմբերի 21-ին զեկուցել ՇՈՒ-ի անցկացմանը պատրաստ լինելու մասին:

7. ՇՈՒ-ի մասնակիցներին՝

1) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում գործելու» պլանով նախատեսված միջոցառումները, փոխգործողությունների պլանները՝

2) ՇՈՒ-ի ընթացքում իրականացված միջոցառումների մասին ներկայացնել համապատասխան զեկույցներ ▪

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-11-01 11:21:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ՝ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2024 թվականի նոյեմբերի «01»-ի
ՆՄՈ/514-Ա որոշման

ԿԱԶՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Դավիթ Խուդաթյան	ՀՀ Արմավիրի մարզպետ՝ ուսումնավարժության ղեկավար
2	Խաչատուր Մկրտչյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ՝ ուսումնավարժության ղեկավարի տեղակալ
3	Հովհաննես Մարգարյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

Գլխավոր քարտուղար **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 01.11.2024 10:18:27 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N2
ՀՀ Արմավիրի մարզպետի
2024 թվականի նոյեմբերի «01»-ի
ՈՄՈ/514-Ա որոշման

ԿԱԶՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Հովհաննես Մարգարյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ
2	Մուշեղ Պետրոսյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝ խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար
3	Գառնիկ Մկրտչյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ՝ խաղարկման և վերլուծության խմբի անդամ
4	Վահան Սրեյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ՝ խաղարկման և վերլուծության խմբի անդամ
5	Գառնիկ Ղուկասյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ՝ խաղարկման և վերլուծության խմբի անդամ

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 01.11.2024 10:20:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N3
ՀՀ Արմավիրի մարզպետի
2024 թվականի նոյեմբերի «01»-ի
ՈՄՈ/514-Ա որոշման

ԿԱԶՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Հ/հ	Ուսումնավարժության մասնակիցներ	Միջնորդներ	
		Զբաղեցրած պաշտոնը	Անուն Ազգանուն
1	Արմավիրի մարզպետի աշխատակազմի՝ առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, ֆինանսական, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություններ,	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ	Արտակ Առաքելյան
	Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողով, Արաքս համայնքի Լուսագյուղ, Ջրառատ և Խոյ համայնքի Ծաղկունք, Ծաղկալանջ, Դողս բնակավայրեր	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ	Սևակ Հովհաննիսյան
2	ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ, ՀԷՑ «Մուսալեռ» ՓԲԸ Արմավիրի էլ ցանց, «Վեոլիա ջուր» ՓԲԸ, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Արմավիրի մարզի թիմ	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ	Ավետիք Հարությունյան

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 01.11.2024 10:22:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023